ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am
Ինտերնետային կայք՝ www.unibank.am
Հաշվետվություն թիվ 02, 26.03.2020

<<Յունիբանկ>> ԲԲԸ Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ

25.03.2020թ. <<Յունիբանկ>> ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

1.1. Բանկի Կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետի առաջին մասը և երկրորդ մասի առաջին ենթակետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 20,489,652,500 (քսան միլիարդ չորս հարյուր ութսունինը միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է 172,886,525 /մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ/ հատ տեղաբաշխված սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 /երեսուներկու միլիոն տասը հազար/ հատ տեղաբաշխված տարեկան հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է՝

- 526,110,475 /հինգ հարյուր քսանվեց միլիոն մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով և

- 11,211,630 /տասնմեկ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր երեսուն/ հատ տարեկան հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի Կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետի երկրորդ մասի առաջին ենթակետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

Մինչև 2020 թվականը թողարկված տարեկան հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը հաշվարկել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ: 2020 թվականից հետո թողարկված տարեկան հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը հաշվարկել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ տարեկան 27% տարեկան տոկոսադրույքով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ:

Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունը նոր խմբագրությամբ, այն ներկայացնել գրանցման ՀՀ ԿԲ՝ համաձայն ՀՀ ԿԲ Խորհրդի <Կանոնակարգ 1>-ի պահանջների:

1.2. Թողարկել տարեկան 27% հաստատագրված շահութաբաժնով լրացուցիչ արտոնյալ բաժնետոմսեր 4.778.261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխման իրականացմամբ, 230 (երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ տեղաբաշխման արժեքով:

1.3. Որոշման 1.2 կետն ուժի մեջ է մտնում <Յունիբանկ> ԲԲԸ Կանոնադրության փոփոխությունների՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցումից հետո:

Վարչության նախագահ – գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյան